ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2012թ. **N ----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՌԱՖԱՅԵԼ ԱՐՏԵՄԻ ՎԱՀԱՆՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2794-րդ տարեդարձի առթիվ, շախմատի բնագավառում ունեցած մեծ վաստակի և ներդրած նշանակալի ավանդի համար միջազգային գրոսմայստեր, հանրահայտ շախմատիստ Ռաֆայել Արտեմի Վահանյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՌԱՖԱՅԵԼ ԱՐՏԵՄԻ ՎԱՀԱՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռաֆայել Արտեմի Վահանյանը ծնվել է 1951 թվականի հոկտեմբերի 15-ին Երևան քաղաքում:

Ռաֆայել Վահանյանը մի ողջ դարաշրջան է համաշխարհային շախմատում:

Ռաֆայել Վահանյանը համաշխարհային հռչակ ու ճանաչում վայելող շախմատիստ է, ով դարձել է շախմատի համաշխարհային օլիմպիադայի կրկնակի չեմպիոն և աշխարհի կրկնակի չեմպիոն թիմային հաշվարկում:

1970-ականների վերջերից արդեն Ռաֆայել Վահանյանն իր վրա սևեռեց շախմատի համաշխարհային հանրությանը, պարտադրեց խոսել իր բացառիկ կարողությունների մասին: Հատկանշական է Անատոլի Կարպովի տված գնահատականը. «Ռաֆայել Վահանյանի հետ միշտ դժվար է խաղալ, որովհետև անսպասելի վճիռների և յուրահատուկ իմպրովիզացիաների վարպետ է: Ֆիզիկայի ուսուցիչ Արտեմ Վահանյանի ընտանիքում ծնված Ռաֆայել Վահանյանը շախմատ սկսել է խաղալ հինգ տարեկանից, տասնվեց տարեկանում դարձել է դպրոցականների ԽՍՀՄ առաջնության չեմպիոն, իսկ 18 տարեկան հասակում Գրոնինգհեմում կայացած միջազգային պատանեկան մրցախաղում ճանաչվել է հաղթողներից մեկը: Առաջին հաջողություններից հետո սկիզբ է առել Վահանյանի հաղթարշավը համաշխարհային շախմատում, որը շարունակվել է մինչև 1990-ականների սկիզբը:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱՖԱՅԵԼ ԱՐՏԵՄԻ ՎԱՀԱՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռաֆայել Արտեմի Վահանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱՖԱՅԵԼ ԱՐՏԵՄԻ ՎԱՀԱՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռաֆայել Արտեմի Վահանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ